

ԿՐԹԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՕՋԱԽ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Երախտագետ սրտով և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ վերջին տարիներին Լիբանանի հյուրընկալ հողի վրա և մանավանդ Բեյրութում հոգևոր, կրթական, ազգային-եկեղեցական խոստումնալից մի զարթոնք է ապրում հայությունը, խաղաղ ու բարօր կյանքի պայմաններում, տեղի արաբ ազնիվ ու աշխատասեր ժողովրդի ասպնջականության և տեղական իշխանությունների հոգածու, բարյացակամության շնորհիվ, զարթոնք, որի շոշափելի արտահայտություններն են հանդիսանում հայկական նոր եկեղեցիների և կրթական նոր օջախների, մշակութային հաստատությունների, ակումբների կառուցումներին, որոնց շուրջ էլ համախմբվում է մեր ազգային-եկեղեցական կյանքը սփյուռքում:

Այսօր սփյուռքի մեր հոծ ու կազմակերպված կարևորագույն ու բազմամարդ համայնքներից մեկն է լիբանանահայ գաղութը, որտեղ հայ եկեղեցին և դպրոցը հայ նոր սերնդի քրիստոնեական և հայեցի դաստիարակության, հայապահպանման և մեր գոյության, տևականության երկու հիմնական ու հաստատուն սյուներն են հանդիսանում, երկու ամուր կուվաններ, որոնք նախախնամական դեր են կատարում մանավանդ սփյուռքի պայմաններում մեր ժողովրդի կյանքում:

Վերջերս Բեյրութում դարձյալ հայկական կրթական մի նոր օջախ իր դռներն է բացում աշակերտության առաջ:

1973 թվականի դեկտեմբերի 28-ին, կիրակի օրը, Բեյրութում, խանդավառ մթնոլորտում և հոծ բազմության ներկայությամբ, Հ. Բ. Ը. միության Լիբանանի շրջանային հանձնախմբի հովանավորությամբ, կատարվում է Հ. Բ. Ը. միության Պողոս Կարմիրյան վարժարանի հիմնարկեքի արարողությունը:

Նոր կառուցվելիք վարժարանի հիմնարկեքի եկեղեցական հանդիսությունը կատարվում է տ. Տաճատ, տ. Գնել սրբազանների, տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի և քահանայական դասի մասնակցությամբ:

Հանդիսությանը ներկա են լինում պաշտոնական, պետական անձնավորություններ, այդ թվում, հանուն Լիբանանի հանրապետության նախագահ Սուլեյման Բեկֆրանժեի՝ կրթական նախարար Էդմոն Ռիզքը, տուրիզմի նախարար Սուրեն Խանամիրյանը, երեսփոխան դոկտ. Անդրանիկ Մանուկյանը, Բեյրութի քաղաքապետության, ազգային-եկեղեցական, մշակութային մարմինների, մամուլի ներկայացուցիչներ:

Հիմնարկեքի արարողության ավարտին տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը ընթերցում

է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը։

Ն. Ս. Օծությունն Իր հայրապետական օրհնության հետ միասին բարեհաճել էր ուղարկել նաև մի գեղեցիկ խաչքար, որը, օծվելուց հետո, զետեղվում է նորակերտ վարժարանի մուտքի սրահի տակ, պատի վրա՝ որպես մնայուն և ներշնչող խորհրդանշանը Մայր Աթոռի հովանու և օրհնության՝ Էջմիածնաբույր մի կենդանի մթնոլորտ ստեղծելով դպրոցի կամարների տակ և աշակերտության արտերում, աշակերտություն, որը պատրաստվում և դաստիարակվում է մեր կրոնաշունչ և հայրենաբույր ավանդությունների ոգով և հայոց պատմության շունչով՝ իր սպասը բերելու մեր ժողովրդի ծառայության և ապագայի առաջընթացին։

Ս. Էջմիածնից ուղարկված խաչքարի զետեղումը նորակերտ վարժարանի մուտքի սրահի ներքո